Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ ԹԻՎ 10-Ն ԵՎ 11-25 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 10-Ն որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթին:

Թիվ թիվ 11-25 որոշումների հերթական համարներից անմիջապես հետո անհրաժեշտ է նշում կատարել որոշման իրավական ակտի բնույթի մասին (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

Թիվ 11 որոշման վերնագրում «համայնքի» բառից հետո անհրաժեշտ է գրառել «2022 թվականի» բառերը:

Թիվ 16 որոշման նախաբանում ((Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ» բառերից հետո գրառված (կետով» բառն անհրաժեշտ է փոխարինել (մասով» բառով:

Թիվ թիվ 16 և 25 որոշումների բովանդակությունների մեջ «2021» թվի փոխարեն անհրաժեշտ է գրառել «2022» թիվը, բացի այդ նշված չեն որոշումների նախագծերին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները:

Թիվ 16 որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի 4-րդ կետում գրառված դրամական օգնության չափը (70.000 ՀՀ դրամ) գերազանցում է ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 9 որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետով սահմանված սոցիալապես անապահով ընտանիքներին մեկանգամյա սոցիալական օգնության տրամադրման առավելագույն չափին, որը կազմում է 50.000 ՀՀ դրամ:

Թիվ 18 որոշման նախաբանում (Սառնաղբյուր համայնքի նախկին ղեկավարի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի նախկին Սառնաղբյուր համայնքի ղեկավարի» բառերով:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմանը հղում կատարելիս անհրաժեշտ է նշել նաև օրենսդրական ակտի համապատասխան դրույթը/ները (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասեր):

Թիվ 19 որոշման մեջ նշված չէ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ժամանակավոր օգտագործման տրամադրման եղանակը և ժամկետը: Որոշմամբ խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը:

Թիվ 22 որոշմամբ անվավեր է ճանաչվել գնման ընթացակարգով կնքված ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-22/2 ծածկագրով պայմանագիրը՝ հղում կատարելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին: Համաձայն նույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի՝ հիշյալ օրենքը կարգավորում է նորմատիվ իրավական ակտի հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, փորձաքննության, հրապարակման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, լրացման և **գործողության դադարեցման**, ինչպես նաև իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման, պարզաբանման հետ կապված հարաբերությունները և օրենսդրական տեխնիկայի կանոնները: Իսկ 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված է, որ նորմատիվ իրավական ակտ է՝ ՀՀ ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտը, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

**Պայմանագիրը նորմատիվ իրավական ակտ չէ**, հետևաբար որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և 38-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:

Բացի այդ, կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ որևէ դեպք նախատեսված չէ, իսկ պայմանագրի կնքման, փոփոխման և լուծման (*ոչ թե անվավեր ճանաչման*) հետ կապված հարցերը կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմանը կատարված հղումը սխալ է:

Թիվ 23 որոշման վերնագիրը չի համապատասխանում որոշման բովանդակությանը, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ համայնքի ավագանուն մեկ անձից գնում կատարելու լիազորություններ վերապահված չեն:

Դրա փոխարեն որոշման վերնագրում գրառված «ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ» բառերով: Որոշման նախաբանում ««Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի» բառերից հետո գրառել «1-ին մասի» բառերը, իսկ «որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի գ) պարբերության» բառերն անհրաժեշտ է փոխարինել «որոշման 1-ին հավելվածով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության» բառերով:

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման ներքին ցանցի լրացուցիչ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի կողմից 2022 թվականի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության կազմակերպման ծառայությունների գնման կարիքը համայնքի ավագանու որոշմամբ **անհրաժեշտ է համարել անհետաձգելի** և թույլատրել նշված ծառայությունները ձեռք բերել մեկ անձից գնում կատարելու ձևով: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N: 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ գնումների գործընթացի կազմակերպման

կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության՝ գնումները կարող են կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ համայնքի կարիքների համար անհետաձգելի համարված գնումների դեպքում՝ համայնքի ավագանու որոշմամբ:

Բացի այդ, համայնքի ավանագու որոշման մեջ բացակայում է մեկ անձից գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը, որն ամրագրված է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, այն է՝ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել:

Թիվ 24 որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքն իր կարիքների համար սեփականության իրավունքով 11,330.0 հազ. դրամ գումարով անշարժ գույք է ձեռք բերել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի բնակիչ Մարտիրոս Միրոյանից: Որոշման մեջ նշված շինության ձեռք բերման նպատակով անշարժ գույքի շուկայական գնահատում իրականացնելու վերաբերյալ որևէ տեղեկություն նշված չէ:

Համաձայն «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ անշարժ գույքի գնահատումը պարտադիր է՝ անշարժ գույքը պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում:

Բացի այդ, անշարժ գույքի շուկայական գնահատումն իրականացվում է ՀՀ տարածքում անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական ունեցող անձանց կողմից:

*Կատարող՝ Շանթ Շաքարյանց*

*26.04.2022թ.*